ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 53
07 փետրվար 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ուղարկում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 22-Ա և 23-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 22-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

որոշում եմ.

Հաստատել Թումանյան համայնքի 2018թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հաստատում եմ՝
Թումանյան համայնքի ղեկավար

Լ. Զավարյան

<<29>> հունվարի 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 թ-ի ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Պատվիրատու. Թումանյանի համայնքապետարան
Համայնքի 2018թ-ի բյուջեից իրականացվող

Գնման առարկայի		Գնման ձևը	Չափի միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազ. դրամ)
Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	անվանումը					
	Ապրանքներ					
30197622.	Թուղթ A4	ՄԱ	տուփ	2300	140	322000
39263200	Գրասենյակային գիրք	ՄԱ	հատ	2300	20	46000
30197231	Ֆայլերով թղթապանակ	ՄԱ	հատ	1100	10	11000
30197234	Թղթապանակ ռեգիստր	ՄԱ	հատ	1000	20	20000
39241210	Մկրատ	ՄԱ	հատ	300	10	3000
30192121	Գրիչ գնդիկավոր	ՄԱ	հատ	100	100	10000
30192128	Գրիչ գելային	ՄԱ	հատ	260	20	5200
30197320	Կաթիչ	ՄԱ	հատ	1000	20	20000
30197100	Կարիչի ասեղ	ՄԱ	տուփ	100	50	5000
30197331	Դակիչ	ՄԱ	հատ	1100	10	11000
24911400	Սոսինձ	ՄԱ	հատ	470	10	4700
24911200	Էմոլսիա	ՄԱ	հատ	350	10	3500
39263410	Ամրակ փոքր	ՄԱ	տուփ	200	30	6000
39263420	Ամրակ մեծ	ՄԱ	տուփ	500	20	10000
30192210	Սկոչ	ՄԱ	հատ	500	10	5000
30197231	Ֆայլ	ՄԱ	տուփ	1500	20	30000
30234400	CD/DVD	ՄԱ	հատ	100	46	4600
30197232	Արագակար	ՄԱ	հատ	80	100	8000
30199420	Նշումների թուղթ	ՄԱ	հատ	210	20	4200
30192100	Ռետին	ՄԱ	հատ	100	20	2000
30192125	Մարկեր	ՄԱ	հատ	250	20	5000
22851200	Թղթապանակ	ՄԱ	հատ	100	100	10000
30192930	Շտրիխ	ՄԱ	հատ	300	20	6000
30192131	Մատիտ	ՄԱ	հատ	100	50	5000
39292500	Քանոն	ՄԱ	հատ	80	10	800
22300000	Բացիկներ	ՄԱ	հատ	300	30	9000
30199792	Օրացույցեր	ՄԱ	հատ	1150	20	23000
30140000	Հաշվիչ հաշվապահական մեքենա	ՄԱ	հատ	2000	5	10000
39811100	Օդի թարմացուցիչներ	ՄԱ	հատ	500	5	2500
39831241	Օճառ ձեռքի	ՄԱ	հատ	300	20	6000
39831246	Ափսե լվանալու հեղուկ	ՄԱ	հատ	500	5	2500

39836000	Ավել սովորական	ՄԱ	հատ	1200	20	24000
33141118	Անձեռոցիկներ	ՄԱ	տուփ	250	30	7500
33761000	Զուգարանի թուղթ	ՄԱ	հատ	150	50	7500
39812410	Կահույք փայլեցուցիչ	ՄԱ	հատ	1000	7	7000
39831247	Աղտահանող հեղուկ սանհանգույցի համար(խտանյութ)	ՄԱ	հատ	800	20	16000
39522250	Փոշու մաքրման կտորներ	ՄԱ	հատ	300	20	6000
39831280	Ապակի մաքրելու միջոց	ՄԱ	հատ	300	5	1500
39514100	Սրբիչ բամբակյա	ՄԱ	հատ	600	20	12000
39831276	Զուգարանների մաքրման նյութեր	ՄԱ	հատ	950	7	6650
39831281	Ապակու մաքրման լաթ	ՄԱ	հատ	200	10	2000
31685000	Էլ. Երկարացման լար	ՄԱ	հատ	1600	10	16000
39221490	Սպունգ	ՄԱ	հատ	250	10	2500
39839200	Գոգաթիակ	ՄԱ	հատ	250	7	1750
31531200	Լամպ	ՄԱ	հատ	100	100	10000
44521100	Կողպեքներ	ՄԱ	հատ	1200	10	12000
31686000	Խրոց	ՄԱ	հատ	100	7	700
31684400	Վարդակ	ՄԱ	հատ	600	10	6000
44521210	Միջուկ փականի	ՄԱ	հատ	1200	6	7200
39221140	Սուրճի բաժակ	ՄԱ	տուփ	3100	3	9300
39221160	Բաժակների կոմպլեկտ մեծ, փոքր	ՄԱ	տուփ	3500	4	14000
39711220	Էլեկտրական սրճեղի	ՄԱ	հատ	2900	4	11600
39221370	Գդալներ, պատառաքաղներ	ՄԱ	տուփ	4400	4	17600
39831283	Հատակի ջնջոց	ՄԱ	հատ	1500	10	15000
39831242	Լվացքի փոշի	ՄԱ	կգ	700	15	10500
39221260	Ափսեներ	ՄԱ	տուփ	3200	4	12800
39224330	Դույլ	ՄԱ	հատ	1000	10	10000
18141100	Ձեռնոցներ ռետինե	ՄԱ	զույգ	600	30	18000
31531100	Էլեկտրական լամպեր	ՄԱ	հատ	2200	20	44000
19641000	Աղբի պոլիէթիլենային տոպրակ	ՄԱ	տուփ	600	20	12000
31651400	Մեկուսիչ ժապավեն	ՄԱ	հատ	200	10	2000
39835000	Հատակի լվացման ձող	ՄԱ	հատ	2000	3	6000
39241120	Խոհանոցային դանակներ	ՄԱ	հատ	600	10	6000
39221480	Զուգարանի խոզանակներ	ՄԱ	հատ	600	5	3000
39221360	Մսնդի սկուտեղ	ՄԱ	հատ	1100	5	5500
39831245	Հեղուկ օճառ	ՄԱ	հատ	650	10	6500
42130000	Ջրի փական	ՄԱ	հատ	2500	3	7500
31521230	Էկոնոմ լամպեր	ՄԱ	հատ	2200	12	26400
31321110	Մալուխ	ՄԱ	մ	200	25	5000
09132200	Բենզին ռեզուլյար	ԳՀ	լիտր	450	3777	1700000
09411700	Բնական գազ	ՄԱ	մ³	200	3750	750000
34331300	Ավտոպահեստամասեր	ՄԱ	-	-	-	350000
18530000	Հատուկ նպատակային այլ նյութեր	ՄԱ	-	-	-	800000
	Աշխատանքներ					
45231270	Բարեկարգում և վերանորոգում	ՄԱ	հատ	800000	1	800000
45231132	Ջրագծերի վերանորոգում	ՄԱ	հատ	500000	3	1500000
31000000	Փողոցների լուսավորության վերանորոգում	ՄԱ	հատ	250000	2	500000
45231220	Ճանապարհների բարեկարգում	ՄԱ	հատ	500000	2	500000
45231187	Ասֆալտապատման աշխատանքներ	ԳՀ	հատ	1300000	1	1300000
45261167	Շենքի վերակառուցման	ԳՀ	հատ	2500000	1	2500000

	աշխատանքներ					
	Ծառայություններ					
65311100	Էլեկտրաէներգիա	ՄԱ	հատ	3565000	1	3565000
91230000	Գազ	ՄԱ	հատ	800000	1	800000
72410000	Կապի ծառայություններ	ՄԱ	հատ	1400000	1	1400000
72500000	Համակարգչային ծառայություններ	ՄԱ	հատ	600000	1	600000
64111100	Տեղեկատվական ծառայություններ	ՄԱ	հատ	450000	1	450000
	Կառավարչական ծառայություններ /աուդիտ/	ՄԱ	հատ	800000	1	800000
70000000	Մասնագիտական ծառայություններ	ՄԱ	հատ	2400000	1	2400000
50311240	Մեքենաների սարքավորումների ընթացիկ նորոգում	ՄԱ	հատ	400000	1	400000
60170000	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	ՄԱ	հատ	440000	1	440000
66510000	Ապահովագրական ծառայություններ	ԲԸԱՀ	հատ		3	100000
	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ					
Ծրագիրը՝ Նախադպրոցական և տարրական կրթություն						
Բաժին 09 խումբ 1 դասլ						
	Նախադպրոցական կրթություն		հատ	22500000	3	22500000
Ծրագիրը՝ Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն						
Բաժին 09 խումբ 5 դասլ						
	Արտադպրոցական դաստիարակություն		հատ	5800000	1	5800000
Ծրագիրը՝ Աղբահանում						
Բաժին 05 խումբ 1 դասլ						
	Աղբահանում		հատ	17000000	1	17000000

Գնումների հատակագրող՝ Է. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 23-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով,<<Իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով՝
ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Թումանյան համայնքում հաստատել.
1/Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2/ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Խորհրդի անդամներին՝
1/Մինչև սույն թվականի ապրիլի 1-ը մշակել Թումանյան համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.
2/յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:
3.ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:
4.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

Հավելված N 1
Թումանյան համայնքի ղեկավարի
«05» փետրվարի 2018թ-ի N 23-Ա որոշման

ԿԱԶՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. Խորհրդի ղեկավար՝ Լևոն Զավարյան /համայնքի ղեկավար/:
2. Խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Երվանդ Շաքարյան /համայնքի ղեկավարի տեղակալ/:
3. Խորհրդի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյան :

4. Խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Սեյրան Շահվերդյան,
   2) ավագանի Սեյրան Այդինյան,
   3) ավագանի Սասուն Վանյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Կամո Պեպանյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Վահրամ Մելիքսեթյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Հրաչյա Սիմոնյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Աշխարհբեկ Շաքարյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ստեփան Վարոսյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Սարգիս Մայիլյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Նորիկ Թորոսյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Արտուշ Գալստյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Էդգար Պետրոսյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Էդգար Վարդանյան:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված N 2
Թումանյան համայնքի ղեկավարի
«05» փետրվարի 2018թ-ի N 23-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Թումանյան համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը,

2) համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Թումանյանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ,

3) համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը,

4) համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար,

5) համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ,

6) համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

2. **ԱՌԿ խորհրդի գործունեության գործառույթներն են՝**

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանանց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հոդհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին,

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ